

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԵՆՈՍՈՒԹՅԱՆ ՓԱՏՏԱԹՈՒՂԹ

Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի պատասխանատվությունը բնապահպանության և հանրային առողջության հարցերում

Սույն փաստաթուղթը պատրաստվել է էկոլոգիական իրավունքի մասնագետ Արթուր Գրիգորյանի կողմից ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի պատվերով՝ «Թրանսփարենսի ինթերնեշնլ հավակնոռուցիկ կենտրոն»-ի և ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության երկխոսություն, տեղեկատվական հարթակ և երիտասարդների ներգրավվածություն» ծրագրի շրջանակներում:

1. Ներածություն (փաստաթղթի հակիրճ նկարագրություն)

Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայումս հաշվառված են հաստատված պաշարներով օգտակար հանածոների շուրջ 871 հանքավայրեր (43 մետաղական, 760 ոչ մետաղական, 44 ստորերկրյա քաղցրահամ և 24 հանքային ջրերի), ինչպես նաև օգտակար հանածոների 580 հանքերևակումներ (131 մետաղական և 449 ոչ մետաղական), օգտակար հանածոների ավելի քան 130 տեսակներ, որոնցից շուրջ 25-ը՝ մետաղական:

Սույն հետազոտությամբ ներկայացվում է Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական խնդիրների, ինչպես նաև հանրային առողջության վրա շրջակա միջավայրի աղտոտմամբ պայմանավորված բացասական ազդեցության վերաբերյալ իրականացված նշանակալի հետազոտությունների ոչ ամբողջական շրջանակը: Կքննարկվեն վեր հանված առաջնահերթությունները, դրանց լուծման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականությունը: Բացի նշվածից՝ ընդհանուր եզրերով կներկայացվեն քննարկվող հարցերի վերաբերյալ օրենսդրական դաշտը և ինստիտուցիոնալ հարաբերությունները:

Սույն փաստաթղթում համառոտ կերպով անդրադարձ կկատարվի նաև հանքարդյունաբերությանն առնչվող բնապահպանական և առողջապահական հարցերին վերաբերելի միջազգային փորձին, այլ երկրներում նույնանման հարցերի համար առաջարկվող լուծումներին:

2. Շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա ազդեցությունների վերաբերյալ Հայաստանում իրականացված հետազոտությունները

Հայաստանում իրականացվել են մեծածավալ և հիմնավոր ուսումնասիրություններ հատկապես մետաղական հանքարդյունաբերության կողմից բնության և մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների վերաբերյալ: Արժեքավոր հետազոտություններ են կատարվել ակադեմիական հաստատությունների, գիտնականների, հասարակական կազմակերպությունների, միջազգային և արտասահմանյան կառույցների կողմից:

Հայաստանի Կառավարությունը նույնպես որոշակի գործողություններ է կատարում ոլորտում համապարփակ քաղաքականություն մշակելու համար: Արդեն երկար ժամանակ է, ինչ Կառավարությունը

փորձում է մշակել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն, սակայն գործընթացն անընդհատ ձգձգվում է: Սույն փաստաթղթի մշակումը նախատեսված է ավարտել մինչև 2019 թվականի դեկտեմբերի վերջ, սակայն մինչ օրս դեռ պարզ չէ, թե երբ այն պատրաստ կլինի: Այս ծրագրի շրջանակներում Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվել են երկու հետազոտություններ՝ ոլորտի տնտեսական վերլուծությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի և առողջության վրա ազդեցության գնահատականըⁱⁱ: Նշված երկու զեկույցները պետք է հիմք դառնան ոլորտի զարգացման ռազմավարությունը մշակելու համար:

Ոլորտին առնչվող առարկայական բնապահպանական խնդիրներ են նկարագրված ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ.-ի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրումⁱⁱⁱ: ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը գույքագրել է այն հանքարդյունաբերական թափոնները, որոնք պետք է առաջնահերթ վնասագրվեն^{iv}: Այս փաստաթղթի ընդունմամբ բնապահպանության ոլորտում լիազոր պետական մարմինը փաստացիորեն հաստատված է համարում այնտեղ թվարկված պոչամբարների և արտադրական լցակայանների բարձր ռիսկայնությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության համար: Չնայած նշված որոշման մեջ թվարկված են ընդամենը 10 օբյեկտներ, որոնց առաջացրած վտանգները պետք է չեղոքացվեն առաջնահերթության կարգով, սակայն Հայաստանում հանքարդյունաբերական լքված օբյեկտների թիվը անհամեմատ ավելին է^v:

Ոլորտի գործունեությամբ պայմանավորված բնապահպանական առաջնահերթությունների վերաբերյալ իր մոտեցումներն է ներկայացրել նաև Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության բազմաշահառու խումբը, որին ևս անհրաժեշտ է անդրադառնալ ոլորտի վերաբերյալ հետազոտությունների շրջանակներում^{vi}: Էական խնդիրներ են վեր հանվել Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացված հետազոտության արդյունքում^{vii}, որում բացահայտված առանցքային հիմնախնդիրներից են Հայաստանում առկա պոչամբարների սխալ կառուցման և դրանով պայմանավորված վթարայնության հարցերը:

Վերջապես, արժեքավոր ուսումնասիրություններ են կատարվել նաև ոլորտի հիմնախնդիրներով զբաղվող հասարակական միավորումների կողմից, որոնք ՀՀ Կառավարությանն են ներկայացրել իրենց վեր հանած հիմնախնդիրները կարգավորելու վերաբերյալ առաջարկություններ^{viii}:

Հայաստանում իրականացվել են մեծածավալ ուսումնասիրություններ, որոնցով հիմնավորվում են հանքարդյունաբերության հետևանքով բնակչության առողջության վրա էական բացասական ազդեցությունները: Մասնավորապես Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից ուսումնասիրվել է հանքարդյունաբերության ոլորտի հարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտը, այդ թվում՝ բնապահպանական և սոցիալական ազդեցությունների հիմնախնդիրը^{ix}, հանքարդյունաբերական թափոնների կառավարման և վերամշակման հարցերը, գնահատվել են այդ թափոններով աղտոտված որոշակի տարածքներում երեխաների առողջության վրա ազդեցությունները^x, պոտենցիալ ռիսկերը և այլ հարցեր: Հանրային առողջության և սննդի անվտանգության հարցերով ուսումնասիրություններ են կատարվել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Էկոլոգանոսֆերային կենտրոնի կողմից, որի արդյունքում Լեռնաձորում և Քաջարանում ապրող երեխաների մազերում հայտնաբերվել է ծանր մետաղների մի ամբողջ փունջ^{xi}:

Հայաստանի շրջակա միջավայրի աղտոտվածության վերաբերյալ հետազոտություններ են կատարել նաև արտասահմանյան կազմակերպությունները, որոնցից է չեխական «Առնիկա» հասարակական կազմակերպությունը: Վերջինս Հայաստանի գործընկերների աջակցությամբ իրականացրել է բազմաթիվ հետազոտություններ Լոռու մարզի՝ հանքարդյունաբերական թափոններով աղտոտված շրջաններում և արդյունքները հրապարակել մի քանի հաշվետվություններում^{xii}:

Հանրային առողջության վրա հանքարդյունաբերության ոլորտի ազդեցությունների հարցում բացակայում են կամ առնվազն հանրամատչելի չեն պետական մարմինների կողմից իրականացված հետազոտությունները: 2012 թվականից սկսած՝ ՀՀ առողջապահության բոլոր նախարարները, ինչպես նաև նախարարության համակարգի մաս կազմող «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները խուսափում են այդպիսի ազդեցությունների առկայության և չափի վերաբերյալ հստակ պատասխաններ տալուց:

Ամփոփելով՝ պետք է նշել, թե հանքարդյունաբերական գոտիներում առատորեն հայտնաբերված որոշ մետաղներ ինչպիսի ազդեցություն ունեն մարդու օրգանիզմի վրա: Մասնավորապես կապարի բարձր պարունակությունն օրգանիզմում ազդում է նյարդային համակարգի վրա, կարող է առաջացնել մտավոր թերզարգացվածություն, տեսողության, լսողության և խոսքի խախտումներ, ազդում է նաև երիկամների և ստամոքսի, նյութափոխանակության համակարգերի վրա: Մարդու օրգանիզմում պղնձի բարձր պարունակությունը կարող է հանգեցնել օրգանիզմում ուռուցքային գոյացությունների զարգացմանը: Կադմիումի բարձր պարունակությունն առաջացնում է կմախքի տձևացում, թոքերի ախտահարում: Այս մետաղների՝ օրգանիզմ թափանցելու ուղիները բազմաթիվ են՝ հողը, ջուրը, օդը և ընտանի կենդանիները: Մետաղները ախտահարում են նյարդային համակարգը, երիկամները, լյարդը:

3. Օրենսդրական կարգավորումները

Հանքարդյունաբերության ոլորտի և դրա հետ փոխկապակցված բնապահպանական օրենսդրությունը շատ ծավալուն է և դինամիկ կերպով փոփոխվող: Սույն փաստաթղթի շրջանակներում կքննարկվեն այն իրավական ակտերը, որոնք կարգավորում են այստեղ մատնանշվող առաջնահերթությունները: Այս տեսանկյունից ոլորտի հարաբերությունները կարգավորող հիմնական իրավական ակտերը հետևյալն են՝

- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք,
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենսգիրք,
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք,
- «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք,
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք:

Անշուշտ, կան բազմաթիվ այլ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնցով կարգավորվում են շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատման կարգը, բնության հատուկ պահպանվող տարածքների իրավական ռեժիմը և հանքարդյունաբերական գործունեությանն առնչվող այլ հարաբերություններ: Այնուհանդերձ, վերևում թվարկված իրավական ակտերով կանոնակարգվում են սույն փաստաթղթում որպես առաջնահերթություն գնահատված հարցերը, որոնք գերազանցապես կարգավորված են նշված օրենքներով:

Կարևոր է արձանագրել, որ ՇՄԱԳ նոր օրենքի ընդունմամբ (2014 թ.) ամրագրվեց պահանջ առ այն, որ շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն ունեցող նախագծերը պետք է փորձաքննության ենթարկվեն ոչ միայն շրջակա միջավայրի բաղադրիչների, այլև մարդու առողջության վրա ազդեցության տեսանկյունից: Հարկ է նշել, սակայն, որ մինչ օրս մշակված չեն ենթաօրենսդրական կարգավորումներ և մեթոդական ուղեցույցներ, որոնց հիման վրա առողջապահության ոլորտում լիազոր մարմինը կարող է իրականացնել մարդու առողջության վրա ազդեցության լիարժեք և իրավաբանորեն որոշակի փորձաքննություն: Ինչպես նախկինում, նոր օրենքի ընդունումից հետո ևս ՀՀ Առողջապահության նախարարությունը մարդու առողջության վրա հանքարդյունաբերական նախագծերի ազդեցությունների վերաբերյալ տրամադրում է ընդամենը կարծիք, որը չի հանդիսանում վարչական ակտ, իսկ նախարարությունը անգամ ՀՀ Վարչական դատարանում քննվող վարույթների ժամանակ չունի իրավասությունի կարգավիճակ:

Օրենսդրական կարգավորում պահանջող մեկ այլ հիմնախնդիր է նախագծերի *օգուտ-վնաս* հարաբերակցության կանոնակարգումը, որը համահունչ կլինի միջազգային բարձրակարգ փորձին և հիմնված կլինի ոչ միայն ընկերության համար շահութաբերության ֆինանսական հաշվարկների, այլև հանրության համար նոր արժեք ստեղծելու սոցիալական չափանիշի վրա. այսպես են ԵՄ երկրներում գնահատում խոշոր ներդրումային ծրագրերի *օգուտ-վնաս* հարաբերակցությունը (առավել մանրամասն կներկայացվի միջազգային լավագույն փորձը քննարկող հատվածում):

Որպես դրական միտում կարելի է գնահատել ՀՀ ընդերքի մասին օրենսդրության այն փոփոխությունները, որոնցով կարգավորվում են ընդերքօգտագործման թափոնների կառավարման, հանքի փակման և դրա համար ֆինանսական երաշխիքներ սահմանելու վերաբերյալ հարցերը: Մասնավորապես հանքարդյունաբերության հետևանքով խախտված շրջակա միջավայրի վերականգնմանն ուղղված միջոցառումները կանոնակարգվում են *ընդերքօգտագործման թափոնների կառավարման* վերաբերյալ իրավական կարգավորումներով, որոնք ամրագրված են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 5.1 գլխով: Անցումային դրույթների համաձայն՝ այս փոփոխությունները սահմանող դրույթները ուժի մեջ են մտնելու 60 ամսվա ընթացքում^{xiii}, որից հետո տեխնաժին հանքավայրերը իրավաբանորեն հանդիսանում են ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտներ: Դրանք շահագործող ընդերքօգտագործողները պարտավոր են նշված ժամանակահատվածում իրենց գործունեությունը համապատասխանեցնել օրենքի նոր պահանջներին՝ միաժամանակ սահմանված կարգով Շրջակա միջավայրի նախարարությանը ներկայացնելով ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանները և ֆինանսական երաշխիքները (վերջնաժամկետը՝ 2022 թ. մայիսի 4): Այս կարգավորումը էապես ավելացնում է ընդերքօգտագործման թափոնների կառավարման և հետագա վնասագերծման համար ընկերությունների պատասխանատվության չափը: Հարկ է նշել, որ այս կարգավորումները և դրանց համար ֆինանսական երաշխիքները վերաբերում են միայն ընդերքօգտագործման թափոններին: Հանքի փակման հետ կապված միջոցառումների համար ընկերությունները պարտավոր են իրականացնել տարեկան հատկացումներ շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում կատարված փոփոխություններով^{xiv} բարելավվել են նաև հանքի փակման հետ կապված իրավակարգավորումները, սակայն բաց են մնացել ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման և հրաժարման արդյունքում մասնակի շահագործված հանքավայրերի

հետագա շահագործմանը կամ կոնսերվացմանն առնչվող բնապահպանական և առողջապահական հարցերը:

Հանրային առողջության մասով հարաբերությունները կարգավորվում են դեռևս 1992 թ.-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով, որի դրույթների մեծ մասը վաղուց արդեն չի համապատասխանում այսօրվա իրավական և ինստիտուցիոնալ իրողություններին և գործնականում կիրառելի չէ:

Հանրային առողջության հարցում ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը սահմանում է պահանջ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար, սակայն օրենքով ոչ մի պետական մարմին չունի բնակչության անվտանգության և առողջության ապահովման որևէ կոնկրետ պարտավորություն:

ՀՀ առողջապահական ոլորտը կարգավորող օրենսդրությամբ համապատասխան պետական մարմինների վրա դրված չէ նաև պարտավորություն՝ հանքարդյունաբերական գոտիներում իրականացնելու պարբերական բժշկական հետազոտություններ կամ ստուգումներ՝ պարզելու համար մարդկանց առողջական խնդիրները և դրանց պատճառները: Օրենսդրությունը չի նախատեսում նաև հանքարդյունաբերական գոտիներում բնակվող մարդկանց առողջական պարտադիր ապահովագրության կամ պատճառված վնասի փոխհատուցման ինստիտուտներ:

4. Ինստիտուցիոնալ շրջանակը

Սույն փաստաթղթում ներկայացվող առաջնահերթությունների համատեքստում առանցքային նշանակություն ունի երկու պետական մարմինների՝ բնապահպանության և առողջապահության ոլորտների պատասխանատուների ինստիտուցիոնալ կարողությունների և նորմատիվային դաշտի գնահատումը:

Ներկայումս Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի առանցքային հիմնախնդիրներից մեկը հանքարդյունաբերական ծրագրերը գնահատելիս ոչ լիարժեք և ցածր որակի փորձաքննությունների մեխանիզմն է: Ընդերքօգտագործման թույլտվություն տրամադրելու հարցում հիմնական մասնագիտական փաստաթուղթը ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունն է, որը, որպես կանոն, տրամադրվում է մեկ-երկու փորձագետների կողմից իրականացված «փորձաքննության» արդյունքում: ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունն իր հերթին ամփոփում է ոչ միայն շրջակա միջավայրի բաղադրիչների, այլև մարդու առողջության, մշակութային օբյեկտների, տնտեսության վրա ազդեցությունների գնահատումը, ինչն օբյեկտիվորեն անլուրջ է: Ըստ ոլորտի ներկայացուցիչների հիմնավորումների՝ վերջիններս նախագծային փաստաթղթերը տրամադրում են համապատասխան ոլորտների պատասխանատուներին՝ կարծիք ներկայացնելու նպատակով: Անհրաժեշտ է արձանագրել, սակայն, որ այսօրինակ մակերեսային՝ կարծիքի մակարդակով իրականացված «փորձաքննությունները» չեն կարող որակ ապահովել, ինչն էլ հանգեցնում է ոչ պրոֆեսիոնալ փաստաթղթերի ձևավորմանը և, որպես դրա հետևանք, անպատասխանատու հանքարդյունաբերության՝ դրանից բխող սոցիալական լարվածության մեծացմամբ:

Նույնը վերաբերում է առողջապահության ոլորտին: Այս ոլորտի հիմնական պատասխանատուն է ՀՀ Առողջապահության նախարարության Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոնը^ա, որը, սակայն, նախագծման փուլում չի իրականացնում մարդու առողջության վրա ազդեցության գնահատում՝ ի հեճուկս ՇՄԱԳ օրենքի ուղղակի և իմպերատիվ պահանջի: Ինչպես վերևում նշվեց, դրա համար չկա իրավական և մեթոդաբանական հենք, ինչը, սակայն, խիստ անհրաժեշտ է:

Ինստիտուցիոնալ կարողությունների բաժինն ամփոփելիս ավելացնենք նաև, որ հանքարդյունաբերական նախագծերը դիտարկելիս պետական մարմինները չեն իրականացնում երկրի տնտեսության վրա դրանց ընդհանուր գնահատում կամ տվյալ տարածքին բնորոշ այլ բիզնես գործունեության տեսակների հետ համատեղելիության գնահատում տարածքային զարգացման համատեքստում: Այս հարցը թերևս ոչ միայն ինստիտուցիոնալ կարողությունների, այլև ռազմավարական գնահատման հարց է: Ակնհայտ է, որ նման ինստիտուտների պայմաններում հնարավոր չէ երկրում զարգացնել հանքարդյունաբերությունը:

5. Հիմնական օրենսդրական և ինստիտուցիոնալ խնդիրները և բացերը

Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման ընթացքում որպես պատասխանատու պետական մարմիններ ներգրավված չեն բոլոր առնչակից պետական հաստատությունները, որոնց մասնագիտական գործունեության տիրույթում է գտնվում տվյալ նախագծի ազդեցության գնահատումը (բնապահպանականի հետ մեկտեղ՝ նաև առողջապահական, տնտեսական, տարածքային զարգացման, մշակութային ժառանգության պահպանման և այլն):

Չի իրականացվում հանքարդյունաբերական ծրագրի *օգուտ-վնաս* հարաբերակցության լիարժեք ստուգում, որով հնարավոր կլինի գնահատել նախագծի ընդհանուր սոցիալ-տնտեսական ազդեցությունը: Դրա համար չկա օրենսդրական պահանջ, ինչպես նաև ենթաօրենսդրական կարգեր և մեթոդաբանական ուղեցույցներ:

Ներկայումս ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման հիմքում ընկած են երեք մասնագիտական փաստաթղթեր՝ ընդերքաբանական, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունները: Չի իրականացվում հանքարդյունաբերական ծրագրի՝ մարդու առողջության վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն, մինչդեռ մարդու առողջության վրա ազդեցության գնահատման պարտավորությունը բխում է Հայաստանի մասնակցությամբ միջազգային պայմանագրերից և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ուղղակի պահանջից:

6. Առկա իրավիճակի բարելավման նպատակով քաղաքականության մշակման առաջարկները՝ ըստ առաջնահերթությունների

Առաջնահերթ լուծում պահանջող բնապահպանական և առողջապահական հիմնախնդիրները կարելի է պայմանականորեն բաժանել երեք հիմնական խմբերի՝

- ա) ՇՄԱԳ գործընթացի որակի բարձրացում և այլ ոլորտների պատասխանատուների ներգրավում փորձաքննությունների և թույլտվությունների տրամադրման գործընթացում,
- բ) հանքարդյունաբերական ծրագրերի օգուտների և վնասների լիարժեք վերլուծություն,

գ) հանրային առողջության վրա հանքարդյունաբերության ազդեցության գնահատում և փորձաքննություն:

- Թույլտվությունների տրամադրման փուլում որպես փորձագիտական մակարդակով պատասխանատու պետական մարմիններ պետք է ներգրավել առնվազն առողջապահության, տնտեսական զարգացման և մշակութային ժառանգության պահպանման հարցում պատասխանատու մարմիններին: Դրա համար անհրաժեշտ է մշակել փուլ առ փուլ իրականացվելիք համակարգային փոփոխությունների ծրագրեր, որոնց իրականացման փուլերը պետք է արտացոլվեն աշխատանքային ծրագրի շրջանակներում մշակվելիք Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրման ճանապարհային քարտեզում: Անհրաժեշտ է օրենսդրական և համակարգային փոփոխությունների միջոցով կանոնակարգել ընդերքօգտագործման թույլտվությունների գործընթացը՝ այն դարձնելով բազմակողմանիորեն հիմնավորված:
- Ի թիվս շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ թույլտվություն տրամադրելիս պետք է գնահատվի նաև կոնկրետ հանքարդյունաբերական ծրագրի համատեղելիությունը տվյալ վայրում իրականացվող տնտեսվարման գործունեության այլ տեսակների հետ, ինչպես նաև ծրագրի ազդեցությունը մշակութային ժառանգության պահպանման տեսանկյունից:
- Ընդերքօգտագործման ծրագրի տված սոցիալ-տնտեսական օգուտների և վնասների հարաբերակցությունը պետք է գնահատվի ոչ թե ընկերության մասնավոր առևտրային շահի, այլ բազմակողմանիորեն գնահատված հանրային բարիքի տեսանկյունից, քանի որ այդ ծրագրերի հետևանքով ոչնչացվում կամ վնասվում են շրջակա միջավայրի բաղադրիչները, որոնք ունեն նաև տնտեսական արժեք, վտանգվում են հանրության առողջությունը, մշակութային ժառանգությունն ու տվյալ տարածքում իրականացվող այլ տնտեսական գործունեությունը: Այս ամենը ներկայումս միջազգային բարձր չափանիշներին համարժեք չի գնահատվում և չի ներառվում հանքարդյունաբերական ծրագրի ծախսային մասում:
- Անհրաժեշտ է միջազգային փորձի ուսումնասիրմամբ մշակել ընդերքօգտագործման հետևանքով մարդու առողջության վրա ազդեցության գնահատման և փորձաքննության նորմատիվային մեխանիզմ, ինչպես նաև սահմանել վնասի փոխհատուցման օրենսդրական մեխանիզմ (օրինակ՝ դա կարող է լինել հանքարդյունաբերական նախագծի հնարավոր բացասական ազդեցությունից ազդակիր համայնքների բնակչության առողջության պարտադիր բժշկական ապահովագրության միջոցով):

7. Միջազգային լավագույն փորձը

Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման հարցում որպես միջազգային դրական փորձ կարելի է դիտարկել Շվեդիայի օրինակը: Այդ երկրում հանքավայրի շահագործման թույլտվության տրամադրումն իրականացվում է մասնագիտացված դատարանի^{xvi} կողմից՝ բոլոր շահագրգիռ կողմերին դատական վարույթի ընթացքում լսելուց և փաստերը բազմակողմանիորեն գնահատելուց հետո միայն:

Ոլորտի *օգուտ-վնաս* հարաբերակցությունը գնահատելու լավագույն օրինակ կարող է ծառայել Եվրամիության տարածքում խոշոր ներդրումային ծրագրերի օգտակարությունը գնահատող ուղեցույցը^{xvii}: Այն մշակված է ոչ միայն հանքարդյունաբերական, այլև առհասարակ բոլոր խոշոր նախագծերի

Կենսունակությունը գնահատելու համար և հիմնվում է հանրության բարեկեցության բարձրացման նախապայմանի, ոչ թե զուտ նախագծային շահութաբերության չափանիշի վրա՝ ֆինանսական *ծախս-օգուտ* մեթոդաբանությամբ: *Օգուտ-վնաս* վերլուծությունը բազմակողմանիորեն գնահատում է նախագծի իրականացման արդյունքում առաջացող «զուտ բարեկեցության էֆեկտը» (net welfare effect) և «զուտ հանրային օգուտը և վնասը» (net public benefit and cost) և դրա կայունության համար կարևոր այլ ուսումնասիրություններ, որոնք չեն արվում ՇՄԱԳ-ի կամ որևէ այլ գործընթացի միջոցով: Այս վերլուծությունն իրականացնելիս գնահատվում է ակնկալվող արդյունաբերական նախագծի ազդեցությունը պետության համար կարևոր տնտեսական և սոցիալական համակարգերի վրա: Այդ ազդեցությունները գնահատելու համար իրականացվում են նախագծի տնտեսական և ֆինանսական վերլուծությունը, ռիսկերի գնահատումը, վերլուծվում են տեխնիկական իրագործելիությունը, բնապահպանական կայունությունը և մի քանի այլ կետեր: Նշված բաղադրիչներից յուրաքանչյուրի համար մշակված են մանրակրկիտ չափանիշներ և մեթոդաբանություններ:

Արդյունաբերական նախագծերի *օգուտ-վնաս* վերլուծությունը և դրա բաղադրիչները (ֆինանսական, տնտեսական, բնապահպանական և այլն) միջազգայնորեն ճանաչված չափանիշներ են, որոնք նպաստում են նախագծի պատշաճ հիմնավորվածությունը (due diligence) գնահատելուն: Դրա նպատակն է գնահատել ներկայացվող նախագծի ֆինանսական կայունությունը և տնտեսական անհրաժեշտությունը: Այս վերլուծությունները կարևոր են նախ և առաջ կատարվող ներդրումների հիմնավորվածությունը գնահատելու և պաշտպանությունն ապահովելու համար:

Հավելված

*Հանրային առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության վերաբերյալ
իրականացված հետազոտությունների և գիտական աշխատանքների ցանկ*

1. Կ. Ղազարյան, Հ. Մովսեսյան, Ն. Ղազարյան «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի շրջակա հողերի միկրոտարրերով աղտոտվածության հետ կապված էկոլոգիական ռիսկերի գնահատումը», Հայաստանի կենսաբանական հանդես, 4(68), 2016 (<http://www.yso.am/files/agaraki-pghndzamolibdenayin.pdf>)
2. ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ, Քաղաքացիական գործողություններ հանուն անվտանգության և շրջակա միջավայրի (ՔԳՀԱՀ) նախագիծ, «ՀՀ գյուղմթերքի ծանր մետաղներով աղտոտվածության ռիսկի գնահատում», Երևան, 2018 (<http://ngoc.am/wp-content/uploads/2017/10/Report-final-1.compressed.pdf>)
3. «Health Risk Assessment of Potentially Toxic Trace and Elements in Vegetables Grown Under the Impact of Kajaran Mining Complex», D.Pipoyan, S.Stepanyan, S.Stepanyan, M.Beglaryan, N.Merendino Informational Analytical Center for Risk Assessment of Food Chain of the Center for Ecological Noosphere Studies of NAS RA Yerevan Armenia Department of Ecological and Biological Sciences (DEB), Laboratory of Cellular and Molecular, Nutrition Tuscia University Viterboltaly, Biological Trace Element Research, 2018 (<https://link.springer.com/journal/12011>)
4. «Exposure assessment of potentially toxic trace elements via consumption of fruits and vegetables grown under the impact of Alaverdi's mining complex», D.Pipoyan, M.Beglaryan, L.Sireyan, N. Merendino, Human and Ecological Risk Assessment: An International Journal, Volume 25, 2019, Issue 4 (<https://www.tandfonline.com/doi/full/10.1080/10807039.2018.1452604>)
5. “Mine Waste Classification and Management”, “Series on International Best Practice, Mining Legislation Reform Initiative” (<https://bit.ly/2Rxhs3q>)
6. Վլադո Վիվոդա և Ջոնաթան Ֆալչեր, Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, (Երևան), աշխատանքային թուղթ N3 (2017 թ. փետրվար), (<http://mlri.crm.aua.am>)
7. «Մերձսևանյան օֆիոիտային գոտու ապարների և հողերի էկոերկրաքիմիական վիճակը» (Գևորգյան Ռ. Գ., Մինասյան Գ.Ա., Գևորգյան Մ. Ռ., «Вестник Отделения наук о Земле РАН» գիտատեղեկատվական ամսագիր, համար 27, 2009 թ.) (<https://onznews.wdcb.ru/publications/asepg/geoecol-4.pdf>)
8. Ecological and geochemical assessment of environmental state of the city of Kajaran», A. Saghatelian, V. Gevorgyan, S. Arevshatyan, L., L.Sahakyan; CENS of NAS RA, 2008 (<http://cens.am/book/ecological-and-geochemical-assessment-of-environmental-state-of-the-city-of-kajaran>)
9. «Հանքարդյունաբերության պոչամբարների և Կապանի պղնձի կոմբինատի գործունեության ազդեցության գնահատումը Կապան քաղաքի շրջակա միջավայրի վրա», ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն, 2007 (<https://www.ecolur.org/files/uploads/kapan.pdf>)

10. “Heavy metals in the surroundings of mining and metallurgical sites in the Lori region in Armenia”, Author: Martin Bystrianský, Contributing authors Marek Šír, Jitka Straková, Nikol Krejčová (<https://www.ecolur.org/files/uploads/armeniaheavymetalsajweb.pdf>)
11. «Թուխմանուկի հանքավայրի գոտու հողերի և գետերի հատակային նստվածքների էկոքիմիական վերլուծություն», Սեյրան Մինասյան, 2013 թ.
12. «Հանքարդյունաբերության պոչամբարների և Կապանի պղնձի կոմբինատի գործունեության ազդեցության գնահատումը Կապան քաղաքի շրջակա միջավայրի վրա», ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն, 2007 (<https://www.ecolur.org/files/uploads/kapan.pdf>)
13. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն
 - «Քաջարան քաղաքի էկոլոգիական իրավիճակի հետազոտում», 2005, http://www.armecofront.net/wp-content/uploads/2013/12/monitoring_qajaran_hashvetwutyun.pdf
 - «Հանքարդյունաբերության պոչամբարների և Կապանի պղնձի կոմբինատի գործունեության ազդեցության գնահատումը Կապան քաղաքի շրջակա միջավայրի վրա», 2007, http://www.armecofront.net/wp-content/uploads/2013/12/monitoring_kapan_hashvetwutyun.pdf
 - «ՀՀ գյուղմթերքի՝ ծանր մետաղներով աղտոտման ռիսկի գնահատում. Ալավերդի, Ախթալա, 2011» http://www.armecofront.net/wp-content/uploads/2013/12/report_Alaverdi_2010_Arm1.pdf
14. Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուբեն Մովսեսյանի հոդվածները
 - «ՀՀ լեռնային արդյունաբերության թափոնները. խնդիրներն ու նրանց լուծման ուղիները», 2013 (<http://www.armecofront.net/wp-content/uploads/2013/12/4.-WASTE-OF-MINING-INDUSTRY-OF-THE-RA-THE-PROBLEMS-AND-WAYS-OF-SOLVING-THEM.pdf>)
 - «Հայաստանի Հանրապետության հարստապոչների հետ կապված առաջնահերթ խնդիրները», 2014, [ռոստերեն \(http://www.armecofront.net/wp-content/uploads/2013/12/3.-PRIORITY-PROBLEMS-RELATED-WITH-TAILING-DUMPS-OF-THE-REPUBLIC-OF-ARMENIA.pdf\)](http://www.armecofront.net/wp-content/uploads/2013/12/3.-PRIORITY-PROBLEMS-RELATED-WITH-TAILING-DUMPS-OF-THE-REPUBLIC-OF-ARMENIA.pdf)
15. «Իրավիճակը Հայաստանի Ախթալա քաղաքում. Հանքարդյունաբերության բնապահպանական և առողջապահական հետևանքները», Ռուզաննա Գրիգորյան, հանրային առողջապահության մագիստրոս, բժշկուհի, Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ), 2015 թ. մայիս (<https://bit.ly/3a8NNE1>)
16. «Հետաքննություն Կապանի էկոլոգիական վիճակի վերաբերյալ»: Հետաքննությունը կատարվել է Հետաքննական լրագրության դանիական ասոցիացիայի աջակցությամբ (Scoop): «ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ #211,19.11.2009

17. «Մեղրիզետ, Ողջի և Արծվանիկ գետերի՝ ծանր մետաղներով աղտոտվածության աստիճանը», Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, <http://www.armecofront.net/wp-content/uploads/2013/12/4-POLLUTION-LEVEL-OF-THE-MEGHRIGET-VOGHCHI-AND.pdf>
18. «Շնող գետի ջրի որակի դինամիկան 2009-2015 թթ.-ի ընթացքում»: Սեյրան Մինասյան, ՀՀ ԳԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ, <https://bit.ly/3dXKpx0>
19. «Գեղարոտ գետի ջրաքիմիական վերլուծություն 2007-2014 թթ.-ի համար»: քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ, ջրի որակի մասնագետ Լիանա Մարգարյան, <http://www.armecofront.net/lrahos/gegharot-vtang/>
20. «Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատ» ՓԲԸ-ի «Նահատակ» պոչամբարի ազդեցությունը Մեծ Այրում և Ճոճկան համայնքների այգիներում աճող դեղձի քիմիական բաղադրության վրա, Սեյրան Մինասյան http://aarhus.am/Expert_2015/02.07-Analiz%20situation%20Ayrum%20Dexc-Seyran%20Minasyan.pdf
21. Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ), «Երեխաների արյան մեջ կապարի պարունակության հետազոտություն Ախթալա, Ալավերդի և Երևան քաղաքներում: Ալավերդի քաղաքի հողերի ծանր մետաղներով աղտոտվածության գնահատում»: <http://www.armecofront.net/wp-content/uploads/2013/12/akhtalaarm.pdf>
22. Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ), Հանքարդյունաբերական համայնքների շրջակա միջավայրի անկախ մշտադիտարկման արդյունքներ
 - Ագարակ համայնքի մանկապարտեզների և դպրոցների հողի և խմելու ջրի հետազոտման վերջնական զեկույց, <https://bit.ly/3mGvo6N>
 - [Ալավերդի քաղաքի մանկապարտեզների և դպրոցների հողի և խմելու ջրի հետազոտման արդյունքները](https://bit.ly/3g2Vr6N), <https://bit.ly/3g2Vr6N>
 - Ախթալա համայնքի մանկապարտեզների և դպրոցների հողի և խմելու ջրի հետազոտման վերջնական զեկույց, <https://bit.ly/3gcljw5>
 - Արարատ համայնքի մանկապարտեզների և դպրոցների հողի և խմելու ջրի հետազոտման վերջնական զեկույց, <https://bit.ly/3tgggPZ>
 - Արծվանիկ և Քաջարան համայնքների մանկապարտեզների և դպրոցների հողի և խմելու ջրի հետազոտման վերջնական զեկույց, <https://bit.ly/3ddWPIj>
 - Արմանիս համայնքի մանկապարտեզների և դպրոցների հողի և խմելու ջրի հետազոտման վերջնական զեկույց, <https://bit.ly/3ddu0VZ>
 - Կապան, Սյունիք և Աճանան համայնքների մանկապարտեզների և դպրոցների հողի և խմելու ջրի հետազոտման վերջնական զեկույց, <https://bit.ly/2OPyY1W>
23. Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների գնահատում, 2014 թ., <https://bit.ly/2OK4COh>

24. Վերջնական հաշվետվություն Արարատյան դաշտի հորատանցքերի, բնական աղբյուրների և ձկնային տնտեսությունների գույքագրման և հաշվառման վերաբերյալ, 2016 թ., <http://www.armecofront.net/wp-content/uploads/2013/12/inventoryreportarm.pdf>
25. «Ամուլսարի ծրագրի շրջանի ջրերի և Ջերմուկի թերմալ ջրերի իզոտոպային կազմի վերլուծությունը», Հավելված 1: <https://bit.ly/3t9xkqj>
26. «Ամուլսարում գետակներից մեկի ջրի նմուշի փորձարկումների արդյունքները», «Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիայի արդյունքները, 10.09.2018, <http://www.armecofront.net/wp-content/uploads/2013/12/N-871.pdf>

ⁱ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայք, բնական պաշարներ-ընդհանուր տեղեկություններ, <http://www.minenergy.am/page/472>:

ⁱⁱ «Շրջակա միջավայրի և առողջության վրա ազդեցության գնահատում», ներկայացվել է DMT-GTK Հայաստան համատեղ ձեռնարկության (JV-DGA) կողմից, 2020 թ. մարտ:

ⁱⁱⁱ «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր», Հավելված ՀՀ Կառավարության 2014 թ.-ի մարտի 27-ի N 442-Ն որոշման, <https://www.gov.am/files/docs/1322.pdf>:

^{iv} «Ընդերքօգտագործման թափոնների գույքագրման արդյունքում առանձնացված՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների նվազեցման առաջնահերթ ծրագրերի իրականացում պահանջող ընդերքօգտագործման թափոնների փակման օբյեկտների, լքված արտադրական լցակայանների և խախտված տարածքների ցանկն ու նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2019 թ.-ի հոկտեմբերի 11-ի N 337-Ն հրաման, <http://www.mnp.am/uploads/1/15/71036610/Hraman337.pdf>:

^v Հայաստանի ամերիկյան համայնքարան, Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, Հանքարդյունաբերական համայնքների տվյալներ և քարտեզներ, <https://crm.aua.am/hy/independentmonitoring/maps/>:

^{vi} «Հայաստանյան ԱՃԹ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ», հայեցակարգային փաստաթուղթ, https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Responsible_mining_concept_paper.pdf:

^{vii} «Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում-Հայաստան», 2016 թ. ապրիլ, <http://documents1.worldbank.org/curated/en/810031468197953609/pdf/106237-ARMENIAN-WP-P155900-PUBLIC.pdf>:

^{viii} Մետաղական հանքարդյունաբերության վերաբերյալ նախնական առաջարկներ, <https://www.armecofront.net/lrahos/metal-mining-industry/>:

^{ix} Վլադո Վոլվոդա, Ջոնաթան Ֆուլչեր, Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում, 2017 թ. փետրվար, https://mlri.org.am/media/pdfs/93_2289.pdf:

^x Varduhi Petrosyan, Anna Orlova, Charles E. Dunlap, Emil Babayan, Mark Ferfel, Margrit von Braun, Lead in residential soil and dust in a mining and smelting district in northern Armenia: a pilot study <https://ace.aua.am/files/2014/02/13.-Petrosyan-Varduhi-Anna-Orlova-Charles-E.-Dunlap-Emil-Babayan-Mark-Ferfel-and-Margarit-von-Braun.-Lead-in-residential-soil-and-dust-in-a-mining-and-smelting-district-in-northern-Armenia-a-pilot-s.pdf>; Varduhi Petrosyan, Ruzanna Grigoryan, Dzovinar Melkom Melkomian, Vahe Khachadourian, Andrew McCarot, Byron Crape, Risk factors for children's blood lead levels in metal mining and smelting communities in Armenia: a cross-sectional study <https://bmcpublikealth.biomedcentral.com/articles/10.1186/s12889-016-3613-9>; Varduhi Petrosyan, Ruzanna Grigoryan, Dzovinar Melkom Melkomian, Kristina Akopyan, Akhtala Pilot Project on Community Empowerment, Final Report, Armenia 2014 թ. https://chsr.aua.am/files/2015/01/Akhtala-Pilot-Project_Final-Report_Action-Plan_2014.pdf; Քրիստինե Հակոբյան, Ծովինար Մելքոն Մելքոնյան, Ռուզաննա Գրիգորյան, Վարդուհի Պետրոսյան, Բնապահպանական ռիսկի մանրամասն գնահատում Հայաստանի 11 համայնքներում, Հայաստան, 2014 թ., https://chsr.aua.am/files/2015/01/TRA-report- ARMwebpage-June_2015.pdf:

^{xi} ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Էկոլոգանոսֆերային կենտրոն, հետազոտություն՝ Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի վիճակի էկոլոգատերկրաքիմիական գնահատում, Երևան, 2008 թ.:

^{xii} Czech non-governmental organization Arnika, Armenia, <https://english.arnika.org/armenia#publications>.

^{xiii} «Հայաստանի Հանրապետությունում ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (ՀՕ-161-Ն, ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 18-ին, ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 04.05.2017), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=109031>:

^{xiv} «Հայաստանի Հանրապետությունում ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (ՀՕ-397-Ն, ընդունվել է 2020 թ.-ի հուլիսի 16-ին, ուժի մեջ է մտել 2020 թ.-ի օգոստոսի 16-ին), <https://www.arlis.am/documentview.aspx?docid=145085>:

^{xv} ՀՀ ԱՆ Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոն, <https://ncdc.am/>:

^{xvi} Շվեդիայի՝ շրջակա միջավայրի մասին օրենսգրքը, <http://www.swedishepa.se/Guidance/Laws-and-regulations/The-Swedish-Environmental-Code/>:

^{xvii} Guide to cost-benefit analysis of investment projects, https://ec.europa.eu/regional_policy/sources/docgener/studies/pdf/cba_guide.pdf.